Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
փետրվարի 9-ի N 167 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովների ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովները (այսուհետ՝ ատեստավորման հանձնաժողովներ) իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով և հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի հերթական ատեստավորման կարգով:

3. Ատեստավորման հանձնաժողովների գործունեության նպատակն ուսումնական հաստատության ուսուցչի պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային եղանակով ատեստավորում իրականացնելն է:

4. Ատեստավորման հանձնաժողովները երեք տարի ժամկետով և հասարակական հիմունքներով գործող մարմիններ են, որոնց անհատական կազմը, այդ թվում՝ նախագահը և քարտուղարը հաստատվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով:

5. Ատեստավորման հանձնաժողովները բաղկացած են 5 անդամից:

6. Ատեստավորման հանձնաժողովներին ուղղված հայտերի ընդունումը և միջանկյալ աշխատանքները կազմակերպում է նախարարության, տարածքային

կառավարման մարմնի, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ լիազոր մարմին) համապատասխան ստորաբաժանումը:

2. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

7. Ատեստավորման հանձնաժողովները ձևավորվում են նախարարի հրամանով՝ տվյալ տարածքային կառավարման մարմնի ղեկավարի՝ մարզպետի, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ լիազոր մարմին) առաջարկության հիման վրա:

8. Ատեստավորման հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներ, լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի, Երևանի քաղաքապետարանի կողմից առաջադրման դեպքում՝ համապատասխան վարչական շրջանի կրթության ոլորտի և նախարարության մասնագետներ:

9. Ատեստավորման հանձնաժողովները կազմվում են նախարարի երեք և լիազոր մարմնի երկու ներկայացուցիչներից:

10. Ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին որևէ անդամի հետագա մասնակցության անհնարինության դեպքում տվյալ հանձնաժողովի կազմը համալրվում է նախարարի հրամանով՝ սույն կարգի համաձայն:

11. Ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին նախագահի և (կամ) քարտուղարի հետագա մասնակցության անհնարինության դեպքում նախարարի համապատասխան հրամանով նշանակվում է տվյալ հանձնաժողովի նոր նախագահ կամ քարտուղար:

3. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12. Ատեստավորման հանձնաժողովներն իրենց աշխատանքը կազմակերպում են առկա կամ հեռավար նիստերի միջոցով: Հեռավար նիստերը տեսաձայնագրվում են:

13. Ատեստավորման հանձնաժողովների նիստերն իրավազոր են, եթե նիստերին մասնակցում են հանձնաժողովի անդամներից առնվազն չորսը:

14. Ատեստավորման հանձնաժողովների որոշումներն ընդունվում են անդամների կեսից ավելի կողմ ձայներով:

15. Ատեստավորման հանձնաժողովները կարող են դիմել նախարարին հանձնաժողովի անդամին հանձնաժողովից հեռացնելու միջնորդությամբ, եթե այդ անդամը՝

1) երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայել է նիստերից.

2) երեք անգամ հրաժարվել է մասնակցել քվեարկությանը:

16. Ատեստավորման հանձնաժողովի միջնորդությունն ընդունելուց հետո նախարարությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում տվյալ ատեստավորման հանձնաժողովի անդամին առաջադրած մարմնին առաջարկում է երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նոր անդամի թեկնածու՝ հրամանում համապատասխան փոփոխություն կատարելու համար:

17. Նոր անդամի թեկնածությունն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում նախարարի հրամանով կատարվում է համապատասխան փոփոխություն:

4. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

18. Ատեստավորման հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

2) վարում է հանձնաժողովի նիստերը.

3) որոշում է աշխատանքների հետ կապված հարցերի, դիմումների քննարկման հերթականությունը՝ այն համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ.

4) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

5. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

19. Ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը՝

1) արձանագրում է հանձնաժողովի նիստերը.

2) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ վարում է հանձնաժողովի նիստերը.

3) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

6. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

20. Ատեստավորման հանձնաժողովի անդամը՝

1) կարող է վարել նիստը հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.

2) ուսումնասիրում է փաստաթղթերի փաթեթը.

3) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.

4) մասնակցում է յուրաքանչյուր ուսուցչի համար անցկացվող քվեարկություններին.

5) ստորագրում է ամփոփիչ արձանագրությունը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում՝ կցում է կարծիքը և գրառում է «հատուկ կարծիքը կցվում է» բառերը, նիստը հեռավար կազմակերպվելու դեպքում ստորագրված ամփոփիչ արձանագրությունը և հատուկ կարծիքը (առկայության դեպքում) ուղարկում է հանձնաժողովի նախագահին՝ էլեկտրոնային փոստով.

6) ծանոթանում է նիստերի արձանագրություններին.

7) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

09.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ